

Հ ա շ վ ե տ վ ու թ յ ու ն

ԱՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության 2018թ. կատարած աշխատանքների մասին

Նախարարության ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2018թ. լրիվ կամ մասնակի ստուգումներ է իրականացվել հանրապետության տարածքում գործող 104 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 17 բյուջետային հիմնարկներում, 55 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 21 հիսուն տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, 3 քաղաքային և 7 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 106139.4 հազ.դրամի անօրեն ծախսումներ, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 32.2 հազ.դրամ,
- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 31024.4 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 23980.6 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 751.0 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 115.1 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 6177.7 հազ.դրամ,
- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 7724.6 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 293.0 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 174.4 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 7257.2 հազ.դրամ,
- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 10763.0 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 9400.0 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 1363.0 հազ.դրամ,
- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 12698.2 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 10343.5 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 498.3 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 227.9 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 1628.5 հազ.դրամ,
- նորմերի խախտումներ՝ 43134.9 հազ.դրամ, որից ենթակա է վերականգնման պետական բյուջե՝ 26636.8 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 412.1 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 16086.0 հազ.դրամ,
- գերածախս՝ 542.1 հազ.դրամ, որը ենթակա է վերականգնման ձեռնարկության հաշվին,
- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 220.0 հազ.դրամ, որը ենթակա է հաշվառումով վերաձևակերպման:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 70686.1 հազ.դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները կազմել են՝ 1423.7 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին

վերականգնման ենթակա գումարները՝ 1297.2 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 32732.4 հազ.դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 106139.4 հազ.դրամի անօրինական ծախսերից, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 56063.1 հազ.դրամ, որից՝ պետական բյուջե՝ 29099.2 հազ.դրամ, համայնքային բյուջե՝ 733.6 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 755.1 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 25475.2 հազ.դրամ:

Ապառքի գումարները կազմում են 50076.3 հազ.դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 41586.9 հազ.դրամ, համայնքային բյուջեին՝ 690.1 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 542.1 հազ.դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 7257.2 հազ.դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում «Արցախի ազգային վիճակախաղ» ՓԲԸ և IV-րդ եռամսյակի վերջում ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ տարիներում կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2018թ. վերականգնվել/վերաձևակերպվել է 15421.1 հազ.դրամ, որից պետական բյուջե՝ 1745.5 հազ.դրամ, ձեռնարկության հաշվին՝ 293.1 հազ.դրամ և հաշվառումով վերաձևակերպվել է 13382.5 հազ.դրամ:

Ընդամենը 2018թ. պետական բյուջե է վերականգնվել 30844.7 հազ.դրամ, որից 2018թ. արդյունքներով 29099.2 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 1745.5 հազ.դրամ: 2018թ. արդյունքներով համայնքային բյուջե է վերականգնվել 733.6 հազ.դրամ: 2018թ. ձեռնարկության հաշվին է վերականգնվել 1048.2 հազ.դրամ, որից 2018թ. արդյունքներով 755.1 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 293.1 հազ.դրամ: 2018թ. հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 38857.7 հազ.դրամ, որից 2018թ. արդյունքներով 25475.2 հազ.դրամ, նախորդ տարիների ապառքի գումարներից 13382.5 հազ.դրամ:

Ստուգման արդյունքներով ութ հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԱՀ ոստիկանություն, մեկը՝ ԱՀ դատախազություն: